Արձանագրության 4
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/103» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22.05.2019թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Օրբելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Գասպարյան, Լ. Բաբայան, Կ. Ղազարյան, Ա. Գյուրջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Գ. Օրբելյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, ըստ որի՝ «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 1-ին չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով՝ որոշեց մերժել «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ին և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/103» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Օրբելյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Էմ Էս Լայն» ՍՊԸ	Բավարար
«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/103» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Գ. Օրբելյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/103»** ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Էյ Էմ Էս Լայն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4 Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Օրբելյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.2 Հաստատել 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Օրբելյան

Անդամներ՝ ---------- Ռ. Գասպարյան

---------- Լ. Բաբայան

---------- Կ. Ղազարյան

---------- Ա. Գյուրջյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան